


Աղիսակ ժ.Գ.



Աղիսակ ժ.Գ.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԸ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

Արմեն Մուշեղեան

Խորին ակնածանքով եւ երախտիքի գագաթով
 Լուսիրով եւ ոսուցիս՝ մեծանուն
 Գետրգ Չահուկեանին

Ուրարտական դիցարանի ամբողջական կազմն ընդգրկուած է ՄՀերի դռան արձանագրութեան մէջ: Կողմնակի որոշ տուեալներ են մատուցում նաեւ ուրարտական միւս արձանագրութիւնները: Դատելով ՄՀերի դռան ներկայացրած ցանկից (70 դիցանուն, ինչպէս առկայ է այլ հին արեւելեան դիցարաններում եւս)՝ դիցանունները դասակարգուած են խիստ պատճառաբանուած յաջորդականութեամբ: Այստեղ իւրաքանչիւր դիցական միակոր զբաղեցնում է իր կայուն, ամրագրուած տեղը:

Ուրարտական դիցարանի ուսումնասիրութեամբ զբաղուել են բազմաթիւ արեւելագէտներ եւ հայագէտներ ղեռ անցեալ դարի կէսերից: Նախորդների ուսումնասիրութիւնները, բացառութեամբ Հմայակեանի, նուիրուած են առանձին աստուածութիւնների տիպաբանական գուգահեռներին եւ անուանաբանական քննութեանը, այլեւ դիցարանի կառուցուածքային վերլուծութեանը: Այսպէս շարունակելով Գ. Ղափանցեանի մօտեցումը, Գ. Մելիքիշւիլին փորձել է վերջնականապէս տարբերակել արական եւ իգական աստուածութիւններին (Դ. Меликишвили, 1960: 370-372): Գ. Ջահուկեանը փորձել է յատկապէս պարզել հայկական տարրի առկայութեան խնդիրը, թէ որքանով է այն ընդգրկուած ուրարտական դիցարանի մէջ (Ջահուկեան, ՀԼՊ, էջ 444-45): Վերջին հետազօտու-

թեան հեղինակը՝ Ս. Հմայակեանը, դիցանունները դասակարգում է ըստ երեք խմբի, հաշուի առնելով նրանց գերակայութիւնը եւ գործառնութի կարեւորութիւնը, այլեւ քննում է ծէսերի եւ պաշտամունքի հետ կապուած խնդիրները: Այս տեսանկիւնից այն շատ արժէքաւոր աշխատութիւն է (Ս. Հմայակեան, Երեւան, 1990): Արդ, ինչո՞վ է արդարացուած սոյն ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը: Առաւելապէս մօտեցման տարբերութեամբ:

Այս ուսումնասիրութեան ելակէտը դիցանունների լեզուական պատկանելութեան պարզաբանումն է՝ նախ եւ առաջ անունների կազմութիւնը վերլուծելու միջոցով: Այդ նպատակով պէտք է ներառել հնարաւորին չափ շատ դիցանուններ եւ փորձենք պարզել համակարգի մէջ փոխառնութիւններն ու ներքին օրինաչափութիւնները, նախքան գուգադրական-համեմատական քննութեան անցնելը:

Միանգամայն պարզ է, որ քննուող դիցարանի կազմը գուտ ուրարտական լինել է՛ր կարող, ինչպէս որ «գուտ» է՛ն աշխարհի եւ ոչ մի դիցարան:

Այսպիսով, կարող ենք մատնանշել հետազօտութեան հետեւեալ բնութագրիչները.

- ա) անուանաբանական-բառակազմական,
- բ) աշխարհագրական տեղորոշում,

դ) զիցական գործառոյթի սահմանում:

Անուանաբանական-բառակազմական քննութիւնը ենթադրում է առաջաւորասիական զիցոլորտում գործառող ամենից առաջ ածանցական ձեւոյթների եւ կազմիչների առանձնացում:

	-â
Erin-â	Ťušpue-â
Unin-â	Aj-â
Ĥar-â	Barşij-â
Araš-â	Silij-â
Ur-â	Arj-â
Şub-â	Adij-â
Ĥub-â	Ūij-â
Quer-â	Eliaj-â

-de	-ar-de
Sar-de	Şinuj-ar-de (?)
Ĥal-de (?)	Şiel-ar-de (?)

-ša	-ši (-ne)
'Anap-ša	Irmu-ši-ne
Ipar-ša	

-ta	
Adaru-ta	

ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

- Tej-šeba
- At-bine
- Tala-purâ
- El-p(u)re
- Şiel-arde(?)
- Şinuj-arde(?)
- *I/Er(e)-bune

Վերը նշուած կազմիչներից խուռա-ուրարտական բնոյթ ունեն -â, -(j)ne, -re, -de, -ar-de, -di-ne, -ela-ն (խեթ. -ili)՝ խաթեան, -ša-ն եւ -šine-ն՝ խեթական, իսկ -ta-ն եւ -tu-ն սեմական:

â-ով կազմուած է խուռա-խեթական աստուածանունների գրեթէ կէսը: Չգալիթիւ են կազմում նաեւ -(j)ne-ով առկա-

Ստորեւ կը փորձենք կատարել որոշակի դասակարգում՝ յենուելով նշուած մօտեցման վրայ, բացառելով հիմքակազմիչ ձայնաւորով երեք զիցանուն, որ կարծում ենք բաղադրեալ կազմութիւն չունեն՝ Arne, Arde, Aue, այլեւ արմատական Ua // 'A

	-(i)ne
Ťura-ne	Nala-jne
Ziuqu-ne	Didua-jne
Qiliba-ne	Tarra-j-ne
Ai-ne	'Aruba-jne
Inua-ne	Şiu-jne
Şiri-ne (?)	ĤuŤu-jne
	Aira-jne

-re	-di-ne
Şini-re (?)	Arşibi-di-ne
Ipha-re	

-ela	
Arsim-ela	

-tu	
Sebi-tu	

ԿՐԿՆԱԻՈՐ ԿԱՂԱՊԱՐ

Zu-zumaru

յացող անունները: Մնացած կազմիչները աւելի սակաւադէպ են, ըստ որում դրանցից երկուսը ինքնին բաղադրեալ են՝ -ar-de եւ -di-ne:

Խուռա-ուրարտական միասնական զիցոլորտում, որ մեծ մասամբ պայմանաւորուած է հէնց զիցանունների եւ այլ յատուկ անունների ընդգրկուն գործա-

ուութեամբ, յաճախ դժուար է լինում տարրոշել լեզուական ստոյգ աղբիւրը՝ անգամ անուանական կազմիչների ակնյայտ առանձնացման դէպքում: Այդուհանդերձ, -ša-ն ու -šine-ն կարելի է դիտել բուն խեթական ներդրում, որ վերը նշուած ոլորտից թափանցել են ուրարտականի մէջ, -ela-ն՝ նախախեթական:

Բացի արմատական եւ ածանցաւոր անուններից, զիցարանում հանդիպում են մի քանի բարդոյթներ, որոնց մէջ առանձնանում են Zu-zumaru կրկնութիւնը, ինչպէս նաեւ խեթ. - šepa > ուրարտ. -šeba, խաթ. -pinu > ուրարտ. -bine խուռ. -purâ, -wuri (կամ -eure/-eure) եւ -arde-ով ներկայացող անունները: Թուարկուած բաղադրիչներից -pinu/-puna-ն իրացւում է նաեւ այլ՝ Er(e)bune / Er(e)pune քաղաքանուն մէջ (որի մասին տե՛ս ստորեւ):

Ĥalde-ն իր գործառոյթով բազմաբնոյթ է: Այս զիցանունն ստուգաբանութեան մի շարք փորձեր վաղուց են դրուած շրջանառութեան մէջ: Լեհման-Հառուպտը առնչում է Հայ. կախարդ (>ի-րան. kaxarda. Lehmann-Haupt, 1931, II. SS. 935, 945), Պիտտրովսկին ստուգաբանում է լեզուական պատկանելութեան տեսանկիւնից անորոշ *Hal-«երկինք» արմատից հանելով, որպէս «երկնային» (Питтровскій, 1959: 224): Կան նաեւ այլ ստուգաբանութեան փորձեր, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով խոցելի են եւ վստահութիւն չեն ներշնչում: Թերեւս, եւ վստահութիւն չեն ներշնչում: Թերեւս, կարելի է նոյնացնել խուռ. Ĥel-di կարելի է նոյնացնել խուռ. Ĥel-di «բարձր. վեհ. փառայեղ» բառոյթի հետ, թէեւ այդ դէպքում վիճարկելի է դառնում e>a անցումը, որովհետեւ Դեակոնովը վերականգնում է ընդհանուր խուռա-ուրարտական *xel- նախածեւ (ДВ, 1988: 189):

Անկախ այն բանից, թէ ինչ հիմքից

է կազմուած Ĥalde զիցանունը, նրա արտացոլումը երեւում է Խաղտիք տեղանունն, այլեւ Բեհիսթունեան արձանագրութեան մէջ՝ Արխայի հօր՝ Ĥaldita-ի (Հայ. *Խաղտիք) անունն մէջ: Այն, որ Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւմուտքում եւ սահմանակից տարածքում պէտք է որ տարածուած լինէր Ĥalde աստուծ պաշտամունքը, չպէտք է տարօրինակ թուայ, որովհետեւ ինչպէս նշում է Հմայակեանը. «Ուրարտուում թերեւս է չմայակեանը. «Ուրարտուում թերեւս է եղել «երկիր», ուր չլինէր Խաղտիքն ձօնուած քաղաք, տաճար կամ պաշտամունքային որեւէ այլ կառույց... Խաղտամունքային որեւէ այլ կառույց... Խաղտի պաշտամունքը միայն Ուրարտուում էր սահմանափակուած. այն տարածուած էր ուրարտական պետութեան քաղաքային եւ մշակութային ազդեցութեան ոլկան ե՛ւ մշակութային ազդեցութեան ոլորտի ընդլայնմանը զուգահեռ» (Հմայակեան, 1990 էջ 35, 37):

Teišeba (խուռ. Teššub) զիցանունը կազմութեան տեսանկիւնից Համրնկնում է խեթախաթեան Kamru-šepa, Aška-šepa, Ĥanta-šepa, Išpanza-šepa, այլեւ Iwa(n)-zipa, Mijatan-zipa, Ĥuriyan-zipa, Ĥuwariyan-zipa եւ նման անուններին, որոնց մի մասին եւ նման անուններին ծագում: Ի դէպ, վերագրում է խաթեան ծագում: Ի դէպ, խեթ. -šepa բաղադրիչը Գամկրեկիձէն եւ Իւանովը ենթադրաբար յանդեցնում են Հ.-ե. *seb(ḫ)o-ին, որն արտացոլուած է Հայ. sobi «Իւրայատկութիւն», ուռու. o-coba, պրուս. subs «ինքը» բառերի մէջ եւ փաստօրէն դրան վերագրում անձնաւորող յատկանիշ: Որոշ հետազօտողներ էլ աւելի առաջ գնալով փորձում են զուգահեռ անցկացնել ուրարտական Teišeba-ի եւ յունական θεσέυς-ի միջեւ: Ի դէպ, ձայնածերպայինների տեսութեան դիրքերից ելնելու դէպքում կարելի է վերաբերել *T'eiseb(ḫ)o նախածեւ, որ շատ կանգնել *T'eiseb(ḫ)o նախածեւ, որ շատ մօտ է ուրարտականին, թէեւ գոյութիւն

ունի նաև այլ տեսակետ, ըստ որի յուրական անունը վերապատմական է հանգեցրել է պելասգ-իեօ- «ուժեղ լինել» սկզբնաձևին (MHM, II, 502): Նկատի առնելով այն, որ կայծակ-որոտի աստուածության անունները բազմաթիվ ականդրյալներում կապուած են լոյսի եւ շողարձակման հասկացութիւնների հետ, ապա աւելի տրամաբանական կարելի է նկատել յունական ու ուրարտական անունների հնդեւրոպական աղբիւրից բխեցումը:

Մասնագիտական գրականութեան մէջ -šera-ն մեկնուած է որպէս «ոգի» (հնարաւոր է արդեօք սրա կապը šubâ դիցանուն հետ, դժուար է ասել, ինչպէս hebâ-ն՝ Hēba(t)/Hūbā աստուածուհու անուն հետ այնպիսի կազմութիւնների մէջ, ինչպէս՝ Tanu-heba, šadandu-heba, Pudu-heba, եւ այլն):

Արդ, ուրարտական այս անունը ձեւաւորման տեսանկիւնից հեռանում է խուռական համարժէք անունից եւ յաւակնում աւելի հին եւ նախնական ձեւի կարգավիճակի: Եւ այդ դէպքում Teššub-ի ստուգաբանութիւնը խուռ. teššai- «բարձր. վեհ. տիրական» ածականից բխեցնելու պարագայում (V. Haas, 1994: 309), բախուած է խոչընդոտի, եթէ չընդունենք, որ ուրարտ. teš-ի մէջ թաքնուած է նախնական *te(š)š-ը (Դեակոնովը խուռա-ուրարտական ընդհանուր նախաձեւ է համարում *teš(š)-ը - ДВ; ЭТНОКУЛЬТУРНЫЕ СВЯЗИ, 1988: 175):

Arubaijne դիցուհին ակկադական ականդրյալում նոյնացուել է Ištar-ի հետ: Գտնում ենք, որ այն բխում է սեմական *arḥ- արմատից, որ իր հերթին կարող էր բաղադրուել *arḥ-«հմայել, դիւթել»-ի հետ, մանաւանդ որ թագաւորական փաստաթղթերում իշթարին տրուել է «սքան-

չելի» մականունը (Ղափանցեան, 1940, էջ 48): Համեմատական իմաստաբանութեան տեսանկիւնից յիշատակութեան է արժանի լատ. Venus «հաճոյք», հնդկ. vanas < հ.-ե. *wen-«հմայել, հրապուրել»: Նշուած սեմական արմատից են ժառանգուած արամ. 'arubəšā («սեմական») շաբաթի նախատօնակ. ճրագալոյց» (հմմտ. ասոր. 'arubəšā), այլեւ արաբ. 'aruba «սիրուած կին»: Ի դէպ, Այլերսը վերի արամէական ձեւից է դուրս բերում հայ. ուրբաթ օրանունը (W. Eilers, 1976: 102): Այստեղ պէտք է, իհարկէ, աւելացնել նաև առաւօտ անունը, որ Աճառեանը դրել է չստուգաբանուած բառերի թուում, ըստ երեւոյթին համոզուած չլինելով Շրեոդերի համեմատութեան ճշմարտացիութեան մէջ. վերջինս հայերէն բառի աղբիւրը համարում էր եբրայերէնը՝ 'arabot ձեւը եւ կարծում ենք միանգամայն ճիշտ էր (Schröder, 1711, p. 45): Նախ՝ ոչ մի կասկած չի կարող լինել, որ առկայ է հնչիւնական բացառիկ համապատասխանութիւն: Երկրորդ՝ այդ բանի օգտին է խօսում ուրբաթ զուգահեռութեան առկայութիւնը (հմմտ. շաբաթ եւ շուտ նոյնպէս սեմական զուգահեռերի փաստը): Երրորդ՝ ընդհանուր առմամբ, տոմարական (իմա արարչական շաբաթուայ) յարացոյցները, եթէ կարելի է այդ տերմինն օգտագործել տոմարի նկատմամբ, որպէս կանոն, աւարտուում են այգաբացի մոլորակաստղի անունով:

Հուֆայնե ճակատագրի աստուածութիւնը զուգադրուում է նոյնատիպ խուռ. Hūdēna-ի հետ, որն ի դէպ անբաժան է նոյնպէս յոգնակի ձեւով հանդէս եկող Hūdellura (*Hūdellurina) զուգահեցից: Ո՞րն է սրա հիմքը. hute «գրել» բայահիմքը, ինչպէս մտածում է Իւանովը (B. Иванов, 1988 II:591): Հարցը մնում է ան-

պատասխան, որովհետեւ դիցանուն մէջ առկայ է Huf - ձեւով, որ վկայուած է միայն իմաստով անորոշ huḫutuḫi բառի մէջ, բայց առանձին՝ ոչ: Յստակ է միայն այն, որ զուգահեռ խուռական hūd-ն ունի «աղօթել, երկրպագել. փառաբանել» իմաստը:

Խուռական Hūdēna-Hūdellura ճակատագրի դիցուհիները Hēbat մայր աստուածուհու հետ միասին մասնակցում են մանկածնութեան ծէսին:

Հայկական ժողովրդական հաւատալիքներում նման գործառնութիւն առանձնանում են Չորեքմուտ եւ Ուրբաթամուտ կոյսերը: Սրանք ճակատագրի կանխորոշող, ծննդաբանութեանը գործնականում մասնակցող եւ ամէն կերպ նպաստող ոգիներ են, որոնք պաշտպանում են ծննդկանին չարիքից եւ ի վերջոյ շնորհքներ պարգեւում նրան, ինչպէս նշում է Աբեղեանը (1975, էջ 97-98):

Այս առնչութեամբ հետաքրքիր նիւթ է մատուցում նաև Հայկական Բուն տոմարը: Ուշագրաւ է յատկապէս այն, որ Բուն տոմարի մէջ 4-րդ տեղում (Huḫaijne-ն ուրարտական դիցարանում 4-րդ տեղում է՝ արական աստուածութիւնների ցանկում) Մարգաց ամսանունն է (*Մարգարց): Մարգար(է)-ները նոյնպէս կոչուած էին աղօթքներ կարդալու եւ գուշակութիւններ անելու: Թէեւ մենք վերապահութեամբ ենք վերաբերուել այս ամսանունան իրանական ծագմանը, բայց այժմ կարող ենք հաստատապէս ասել, որ ընդունում ենք Մարգար-ի իրանական աղբիւրից ծագելը, մանաւանդ որ ունենք նոյնպիսի ձեւաւորման փաստ, յանձինս Տիր-ի եւ Մարգար-ի, այն է՝ Տրէ եւ Մարգարէ:

Sarde-ին մենք անդրադարձել ենք Հայկական հնագոյն տոմարին նուիրուած

ուսումնասիրութեան մէջ եւ հաւանական համարել նրա կապը Teššub աստուածութեան սրբազան կենդանիներից մէկի՝ խուռ. šērāji «արեւամուտ» (աւելի ճիշտ է šerrāji տառադարձումը)՝ նշանակող ցլան անուն հետ (ՀԱ, 1996, թիւ 1-12, ցլան 447): Šerri(šu)-ն թերեւս չպէտք է առանձնացուի ընդհանուր սեմական SR արմատից հանուող š-ով եւ š/s-ով հերարմատից հանուող «լուսին. արշալոյս», եբրայական šáhar, արաբ. sāhar «առաւօտ» եւ այլ (W. Eilers, 1976: 26-27) ձեւերից, բայց այն չպէտք է ուղղակիորէն կապել Sarde-ի հետ: Թուում է, վերջինս որոշակի յարաբերութեան մէջ է կովկասեան լեզու-լորտի «գիշեր» նշանակող բառերի հետ, լորտի «գիշեր» նշանակող բառերի հետ, ինչպէս վրաց. ser-«գիշեր»⁴, ինգուշ. sajr-«երեկոյ», աւար. sor-do «գիշեր» եւ այլն: Եթէ այս վարկածը հետազայում հաստատուի, ապա թերեւս հարկ կը լինի որպէս մերձաւոր աղբիւր ընտրել խաթերէնը:

Šebitu-ն սեմական ծագման անուններից է, որի զուգահեռներն են ակկադ. Šabaṭu ամսանունը, արամ. šabbəṭai, ասոր. šbāṭ անունները: Սրանց համար կանխադրուած է ընդհանուր սեմական *šb-«եօթ» արմատը: Նոյն դիցանունը փոխառուած է նաև խեթերէնում՝ šēppitta ձեւով:

Այստեղ պէտք է ընդմիջենք աստուածանունների բնութագրերը, որպէսզի վերականգնենք ուրարտական շաբաթուայ օրանունները՝ համադրելով Հայկական հնագոյն օրանունների հետ.

1.*Šiujne	Արեգ	արեւ
2.*Tejšeba	*Արայի	Մարս
3.*Šielarde	Արամայ	լուսին
4.*Huḫaijne	Մարգարէ	Մերկուրի
5.*Halde	*Տորքայ	Յուպիտեր
6.*Arubaine/		

*Sarde	Աստղկան	Վեցերա
7.* Šebitu	*Շոնոս(h)	Սասոնոն

Arsimela-ն համադրում ենք խեթական դիցարանի *Ḫašammili* դիցանունանը՝ ենթադրելով խաթեան ծագում, որ ձևով պետք է աւելի մօտ լինէր ուրարտականին: Խեթերէնում նախնական լարինգալի առկայութիւնը սովորական է, իսկ ձայնորդ Դ-ն հեշտութեամբ կարող էր ընկնել շփական *s/š*-ից առաջ:

Խեթական *Ḫašammili*-ն ստորերկրայքում բնակուող դարբին աստուածութիւնը է, որ իր յատուկ տեղն ունի օջախի պահպան աստուածութիւնների եւ ոգիների շարքում, իսկ աստղաբաշխական եւ սոմարական բնոյթի տեքստերից մէկում *Ḫašammili*-ն թուարկում է լուսնից, աստղերից եւ գիշերից յետոյ: Նա յատկապէս մանուկների պահպանն էր եւ խնամակալը, ընդ որում նրա պաշտամունքը մեծ տարածում ունէր: Այս աստուածութիւնը մասնակցում էր տաճարների եւ սրբատեղիների օծման արարողութիւններին՝ իր յատուկ ատրիբուտի հետ միասին, որ կոչւում էր «*Ḫašammili*-ի փայտ կամ ծառ»:

Նոյն աստուածութեան անունը, թերեւս, առկայանում է իտալիկեան դիցարանական աւանդոյթում՝ *Kasmilla* ջրահարսի եւ թրակեան *Κασμιλος/Κασμειλος*-ի մէջ:

Šielarde դիցանունը, եթէ իսկապէս իր հիմքում ունի ուրարտ. *šel-«գիշեր» ձեւոյթը (Գ. Меликишвили, 1954: 36), ապա ամբողջը թերեւս կուսնայ «գիշերային աստղ» նշանակումը (=«լուսին»): Այսուհանդերձ, թւում է որոշակի մի փուլում նախնական *arde* լիմաստ բառը ստացել է ածանցական արժեւորում, յամենայն դէպս, ինչպէս կը պարզուի՝ հայերէնում այն արդէն առկայանում է ա-

ծանցական -երդ/տ ձեւով: Նկատի ունենք հէնց տեղանունական արտացոլումները, մասնաւորապէս քննուող դիցանունան արտացոլումը Սղ-երդ/տ անուն մէջ (ուշ շրջանի աղբիւրներում վկայուած Ս/Ջղերեթ, այլեւ Երեթ տարբերակները նոյնի աղաւաղումներն են):

Նոյն -*arde* հայ. -երդ/տ-ով վերջացող կազմութիւնների համար յիշատակելի է նաեւ Թրմերդ/տ անունը: Վերջինիս հիմքն արտացոլում է խաթական *Tarumu* աստուածութեան անունը, որն աւանդուած է նաեւ հայաստանական դիցարանում (Ջահուկեան, 1987, 328): Ուրարտական տեղանունական համակարգում գտնում ենք *URUŠaruarde* անունը, որ նույնպէս կազմուած է *Šaru/Taru* դիցանունական հիմքից եւ տեղադրում է *Ajadu* երկրում՝ Վանայ լճից հարաւ (Н. Арутюнян, 1985: 167):

Հիմա, ինչ վերաբերում է ուրարտ. *šel բառոյթին: Սա, կարծում ենք, համադրում է յունական *σέλας* «լոյս» (հմմտ. ἥλιος<σῆλιος) < հ.-ե. *sǵel (Pokorny J., 1959: 1045), որից էլ ունենք յուն. ἡ σελήνη «լուսնի աստուածուհի. լուսին», այլեւ միջին ձայնադարձից՝ հայ. շող: Սրան հակառակ, Նիկոլաեւը յունական բառը համարում է հիւսիսկովկասեան փոխառութիւն, որ կարծում ենք հաւանական է (С. Николаев, 1985: 67):

Atbine-ն զուգադրելի է խեթական *Ḫatepinu* աստուածութեան հետ: Ի դէպ, Ղափանցեանը իր խորաթափանց հայեացքով նկատել է երկուսի նմանութիւնը, բայց ոչ մի կերպ չի ակնարկում դրանց համապատասխանութեան մասին: Այն խաթեան ծագման անուններից է եւ խեթական դիցարանում հանդէս է գալիս որպէս *Telipinu* աստուածութեան սիրեկան կամ կին եւ թւում է, թէ նոյնանում

է «ծովերի դուստր»-ի հետ (V. Haas, 1994: 444): Իր գործառոյթով այն երկրագործութեան եւ բուսականութեան դիցուհի է եւ ինչպէս միւս դիցուհիները՝ պատկերուել է արծաթէ գաւաթը աջ ձեռքին բռնած: Նրան նուիրուած է եղել երկու տօն, մէկը՝ աշնանը, միւսը՝ գարնանը: Գարնանային *Puruliya* կոչուած նոր տարուայ ծէսի ժամանակ *Ḫatepinu*-ին գտնում ենք 12 աստուածութիւնների ցանկում, որոնք մասնակցում են այդ ծէսին եւ ներկայացնում են 12 ամիսները: Դրանց ուղիղ մէջտեղում *Telipinu*-ն է՝ իր երկու ուղեկիցներով՝ *Katahija* եւ *Ḫatepinu*:

Querâ-ն բազմիցս համեմատուել է վրացական Կուիրիա աստուածութեան հետ (Գ. Меликишвили, 1954: 270, И. Дьяконов, 1967: 135), սակայն դա չի խանդարում, որպէսզի մատնանշուեն այլ տիպաբանական զուգահեռներ: Այդ կարգի մերձաւորութիւն է հանդէս բերում հռոմէական դիցարանի *Quirinus* աստուածութիւնը, որը Դիւմեզիլը բխցնում է **Couirino* նախածեւից (Ж. Дюмезиль, 1986: 132): Դժուար է նկատել, որ հնչիւնական պատկերը եւս շատ չի հեռանում ուրարտականից: Հռոմէական *Quirinus*-ը երրորդ ֆունկցիայի մարմնաւորողն է, առաջին ֆունկցիայի Իւլիտերի եւ երկրորդ ֆունկցիայի Մարսի կողքին ու անմիջականօրէն կապուած է պտղաբերութեան եւ կազմակերպուած հասարակական համայնքի գաղափարի հետ: *Quirinus*-ը առանձնապէս Հռոմի հիւսիսային բլուրներից մէկը՝ *Quirinalis*-ը զբաղեցնող *Quirit-*ների բուն աստուածութիւնն էր եւ փաստօրէն Հովանաւորում էր շինականների ու մշակների եւ դրանով հակադրում ու զազմիկների Մարս աստուածութեանը:

Սա առաւել կարեւորութիւն է ստա-

նում, եթէ նկատի առնենք, որ *Querâ*-ի հնդեւրոպական ծագման մասին մի առիթով արտայայտուել է Ս. Հմայակեանը (ՊԲՀ, 1990, թիւ 1, էջ 166):

Նոյն աստուածութեան պաշտամունքը տարածուած է եղել նաեւ խեթական պետութեան մէջ, որտեղ այն հանդիպում է այլ ջրային ոգիների եւ աստուածութիւնների շարքում՝ *Ḫuwarizanza* *Ḫuwarizanza* ձեւով, որի մէջ աներկբայօրէն կարելի է առանձնացնել *Ḫuwar-i-Ḫur-i-* հիմքը:

Յիշատակուած զոյգ ձեւերից *Ḫuri*-ն արտացոլում է ուրարտ. *Quriane* եւ *Guriajne*, *Ahuriane* եւ ըստ երեւոյթին հայկական Գուգարք (վերջինս թերեւս Գուր-հիմքից կրկնուած կաղապար է), իսկ *Ḫuwar-i*-ին՝ ուրարտ. *Querainili* եւ *Queraitaše*, այլեւ *Quarlini* եւ *Quarzane* (տե՛ս Н. Арутюнян, 1970: 352, 1985: 114) տեղանունների մէջ: Դրանցից *Quarzane* տեղանունը ըստ մեզ պահպանուել է հայկական Խորձեան (խուռ. **Ḫu(w)arzianə/i*) գաւառի անուն մէջ (խուռեւրէնի եւ ուրարտերէնի *h*-*q* անցման մարտին տե՛ս М. Хачикян, 1985:41): Սա հիւսիսային Խորձեանն է՝ տեղադրութեան առումով: Արգիշթե Ա-ն իր իշխանութեան երրորդ (°) տարուայ իրադարձութիւնները նկարագրող Խորխոռեան տարեգրութեան մէջ նշում է իր նուաճած երկրների, այդ թւում՝ *Aništerga*, *Abilianijē*, *Quarzane* եւ *Ustuzā*: Դատելով սրանց տեղադրութիւնից՝ Արգիշթե հարկադրուած է եղել արշաւանքներ ձեռնարկել հիւսիսային եւ հիւսիսարեւմտեան երկրների դէմ:

Eriṇā դիցանունը համադրելի է հայկ. Ըռնա/Առնա գաւառների հետ: Ըստ երեւոյթին, տեղական աստուածութիւններից մէկն է:

Šinire դիցանունը թերևս բաղկացած է ուրարտ. šin, խոռ. šin «երկու» բառից՝ -rī/e ածանցով, ընդհանուր «երկուորեակ» իմաստով: Այն, որ թուականով կարող էր դիցանուն կազմուել՝ արժէ բերել ե՛լ Šebitu, ե՛լ խոռական Šindalwuri ու Šindalirde սպասուհի դիցուհիների անունները: Այստեղ հարկաւոր է անել մի փոքրիկ վերապահում. առայժմ պարզ չէ, թէ արդեօք կապ չունի՞ խեթ. Širini աստուածութեան հետ, որի պաշտամունքը տարածուած էր միջին եփրատի աւազանում:

Ziuqune աստուածութեան անունը գտնոււմ ենք խեթական տեքստերում՝ Zikunui ձեւով (KUB. 59. 31. Haas, 1994: 609): Տեքստերը վերաբերում են աշնանային մի ծէսի նկարագրութեանը. արքայազնը ժամանում է Zalpa քաղաք: Յետոյ թուարկոււմ են զոհաբերութիւնների տեսակները՝ 1 խոճկոր, 6 ձուկ, 6 գորտ եւ 1 օձ: Մէսը սկսոււմ է վրանում, որի կենտրոնում գտնուելիս է եղել Ammamta աստուածուհու կուռքը: Այնուհետեւ թուարկոււմ են մասնակից աստուածութիւնները, այդ թւում եւ Zikunui-ին:

Ar'a դիցանունան համար կարելի է առաջարկել հ.-ե. ստուգաբանութիւն (*arū-«աղօթել»), այնպիսի զուգահեռներով, ինչպէս խեթ. aruḫaizzi «աղօթում է», յուն. ἀράομαι «աղօթում եմ»:

Վերջում հարկ ենք համարում անդրադառնալ աստուածանուններից մէկին, որի մասին Մհերի դուան ցանկում ոչինչ ասուած չէ, բայց որն անկասկած պէտք է տեղ գտնի ուրարտական դիցարանում. դա *I/Er(e)bune աստուածութիւնն է: Այս անուան առաջին վկայութիւնը գտնոււմ ենք Արգիշթե Ա-ի տարեգրութեան մէջ, որի մէջ նկարագրուած դէպքերը վերաբերում են Ն.Ք. 783 թ.: Արգիշթեն՝ ուրար-

տական հաղորդամբ Supane (խեթ. Išuwa) եւ Hatte երկրներից URUI/Er(e)bune/pune նորակառոյց քաղաք է տեղափոխոււմ աւելի քան 6,5 հազ. դաղթականների, «Խալդեան հրամանով Արգիշթե Մինուայորդին ասում է. եւ Երեբունե (=I/Er(e)bune -ի՛մա) քաղաքը կառուցեցի՝ Բիսինիլե (երկրի) գոյութիւնը լուլուական (=բարբարոսական) ցեղերի մէջ ամրապնդելու (համար): Հողը չոր (°) էր, ոչ (մի) բան կառուցուած (չէր) այնտեղ: Հզոր մեծագործութիւններ կատարեցի այնտեղ: Հզօր մեծագործութիւններ կատարեցի այնտեղ: Վեց հազար վեց հարիւր մարդ ռազմական բնակեցրի այնտեղ Խաթեան Մուպայից» (ՈւԱ, 1981, թիւ 22=YKH, 127, II, 32-36): Ուստի բնական է, որ նրանք իրենց հետ պէտք է տեղափոխէին նաեւ քաղաքի անունը, որ ոչ այլ ինչ է, քան խաթեան -puna «զաւակ» բաղադրիչով քաղաքին փոխանցուած դիցանուն (հմմտ. *Tašharuna → URUTašharuna): *DI/Er(e)puna դիցանումը հանդերձ ուրուագծոււմ է Išuwa/Supane երկրի երեք աստուածութեան անուն՝ *DEšue//Išuwa, *DImmaršū//Iwarša եւ *DI/Er(e)puna:

Առայժմ դեռ պարզ չէ, թէ ինչ է թաքնուած I/Er(e)-ի տակ: Ամենայն հաւանականութեամբ խաթեան ինչ-որ բառոյթ է, թէեւ բացառուած չէ, որ դա լիւնի, ասենք, խեթական դիցարանում աւանդուած ակկադ. ծագման Irra/Erra՝ պատերազմի աստուածութեան անունը եւ այդ դէպքում հարկ կը լինի վերականգնել *I/Errapuna հիբրիդային կազմութիւն: Ինչ վերաբերում է վերջինիս սեռային բնոյթին, ապա երկուսն էլ հնարաւոր են, ինչպէս Zaharuna-ն, Hatepuna-ն, Tetepinu-ն՝ իգական են, իսկ Telipuna-ն, Halipinu-ն, Zalipinu-ն՝ արական (V. Haas,

1994: 310-311, 598):

Այստեղ բնականօրէն հարց է առաջանում I/Er(e)bune եւ Երեւան քաղաքանունների յարաբերութեան մասին: Դժուար չէ նկատել, որ դրանց յարաբերակցումը մտացածին է, եթէ իհարկե Երեւան-ը՝ նախորդի՝ ուշ շրջանում՝ իրանական լեզուորոտում աղաւաղուած արտացոլումը չէ:

Ամփոփելով, պէտք է նշենք հետեւեալը. ուրարտական դիցաբանութեանը վերաբերող սկզբնաղբիւրները սակաւ են, իսկ դա հնարաւորութիւն չի տալիս ուսումնասիրողին աւելի խորը եւ ամբողջական ներկայացնելու իրական պատկերը: Ե՛ւ նախորդների, ե՛ւ այս աշխատանքում առաջ քաշուած շատ տեսակէտներ կարօտ են լուրջ հիմնաւորման՝ նոր նիւթերի ներգրաւմամբ, որ առայժմ մատչելի չեն: Այդուհանդերձ, աշխատանքը ծառայում է իր նպատակին. դա լեզուական տեսանկիւնից անունների փոխյարաբերութեան, միւս կողմից՝ ուրարտական, խոռա-խեթական եւ միջագետքեան դիցոլորտներում դրանց գործառական բաշխուածութեան բացայայտումն է: Աշխատանքը ցոյց է տալիս, որ ուրարտական դիցարանի եւ ըստ երեւոյթին ողջ դիցաբանութեան վրայ շատ աւելի մեծ ազդեցութիւն է ունեցել խոռա-խեթական, ներառեալ խաթեան դիցաբանութիւնը, քան մինչեւ այժմ կարելի էր ենթադրել:

ԳՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Աբեղեան Մ., Երկեր, է, Երեւան, 1975:
 Ամալեան Հ., Բառգիրք հայոց, Երեւան, 1975:
 Երեմեան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երեւան, 1963:
 Իշխանեան Ռ., Մի քանի հնագոյն տեղանունների եւ անձնանունների ստուգաբանութեան փորձ, Հայերէնագիտական միջազ-

գային II գիտաժողով, Երեւան, 1987:
 Հմայակեան Ս., Վանի թագաւորութեան պետական կրօնը, Երեւան, 1990:
 Հմայակեան Ս., Կուեռա-Կուառ աստուածութեան պաշտամունքը, ՊՔՀ, 1990, N 1:
 Ղափանցեան Գ., Ուրարտուի պատմութիւնը, Երեւան, 1940:
 Մուշեղեան Ա., Հայոց բուն տոմարի շուրջ, ՀԱ, 1996, N 1-12:
 Ջահուկեան Գ., Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987:
 ՈւԱ=Կարագեոզեան Յ., Ուրարտական աղբիւրները հայկական լեռնաշխարհի եւ հարեւան պետութիւնների մասին, Երեւան, 1981:
 Арутюнян Н., Биайнили, 1970.
 Арутюнян Н., Топонимика Урарту, Ереван, 1985.
 Дьяконов И., Языки Древней Передней Азии, Москва, 1967.
 Дьяконов И., Предистория армянского народа, Ереван, 1968.
 Дьяконов И., Старостин С., Хуррито-Урартские и Восточнокавказские языки, в Сб.: «Древний восток; Этнокультурные связи», Москва, 1988.
 Дюмезиль Ж., Верховные боги Индоевропейцев, Москва, 1986.
 Меликишвили Г., Наири-Урарту, Тбилиси, 1954.
 Меликишвили Г., Урартские клинообразные надписи, Москва, 1960.
 МНМ=Мифы народов мира, II, Москва, 1988.
 Николаев С., Северокавказские заимствования в Хеттском и древнегреческом, в Сб.: Древняя Анатолия, Москва, 1985.
 Пиотровский Б. Б., Ванское царство, Москва, 1959.
 Страбон, География, Москва, 1964.
 Хачикян М., Хурритский и Урартский языки, Ереван, 1985.
 Diakonoff I., Kashkai S., Geographical Names According to Urartian Texts, - «Repertoire géographique des Textes Cuneiformes», Band 9, Wiesbaden, 1981.
 Eilers W., Sinn und Herkunft der Planetennamen, München, 1976.
 Haas V., Geschichte der hethittischen Religion

HDO, Band 15, Leiden, New-York, Köln, 1994.
 Lehmann-Haupt C., Armenien einst und jetzt, II, Berlin-Leipzig, 1931.
 Schröder J., Thesaurus Linguae Armeniacae, Amsterdam, 1711.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Ի. Դեակոնովը վերականգնում է ուրարտ. *Halditaiə նախաձեռն «խալդին մեծ է» նշանակությամբ. տե՛ս ПАН, 1968, стр. 235, прим. 116:
- 2 Ա. Հմայակեան 'Arubajne աստուածությունը նույնիսկ աստուածի ծանօթագրություններից մեկում (Հմայակեան, 1990, էջ 110-11. ծան. 87) հակում է անմիջական կապ տեսնել 'Arubajne-ի եւ հնդիրանական Varuṣa-ի միջև, որ հասանալի է ինչպես թեկուզ հնչյունական առումով:
- 3 Յատուկ շնորհակալություն եմք յայտնում Մ. Խաչիկեանին եւ Ա. Հմայակեանին նախնական միջոցով հետ ծանօթանալու եւ արժեքատր դիտողությունների համար:
- 4 Իմաստային նշանը բերում է ըստ Մելիքիշուխյու (Мелікшанян, 1954: 36):
- 5 Ա. Հմայակեանը փորձում է կապել Մեդրեցու բառարանում արձանագրուած մեղարդ «դուսին» բառի հետ: Սակայն Մեդրեցու բառարանի վրայ հենուելը, այլուր այդ բառը բացակայելու պայ-

մաններում այնքան էլ վստահելի չէ, քանի որ նշում բառարանը ամենաաղաղակամ է և սխալաշատ բառարան է, թերեւս, հայ բառարանագրության ողջ շտեմարանում (տե՛ս Հ. Ա. մալեան, Բաղդիք Հայոց, Երեւան, 1975, էջ Է-ԺԳ): Ըստ երեւոյթին, ճիշտ է նկատել Ղափանցեանը, որ Ս եւ Մ տառերը կարող էին շփոթուել, եւ դժուար է անգամ ասել, արդեօք մեղարդ բառ եղել է, թէ ոչ:

- 6 Այս երկիրը պետք է նույնացնել հիսթապիս այն խորձեանի հետ (յուն. Χορζηνή), որ Ստրաբոնը բնորոշում է որպէս Հայաստանի ամենահիսթապիս եւ ձիւնառատ մարզերից մէկը (Страбон, IX, 14, 4) իսկ Սիւազա-ն (-za-ն ցեղատեղանուանակերտ-ածանց է) տեղադրել Օլթու-չայի սաւզանում՝ միջնադարեան հայկական Ուղթիք/Ուխթիք-ի տեղում: Նշենք, որ Երեւանը կամայականօրէն նույնացնում է Արտազ գաւառանուն հետ, մի բան, որ անհնար է հնչյունական անցումներով բացատրել (Երեւան, 1963, 40):
- 7 Բոլորովին անտեղի են թույն Դեակոնովի կողմից Ere (ցեղանուն) + ebanı «երկիր» կաղապար վերականգնելը (I. Diakonoff, S. Kashkai, 1981: 29), այլեւ ու.ե. հենցի վրայ՝ Ռ. Իշխանեանի կողմից «երեւելի, երեւացող» (Ռ. Իշխանեան, 1987, 71), Յ. Կարազեղեանի կողմից՝ «երջանիկ քաղաք» մեկնութիւնները (Կարազեղեան, 1998, 80-81):

THE STRUCTURE OF URARTIAN PANTHEON [SUP]

Armen Musheghian

The article examines the structure of Urartian pantheon from several points of view. For the first time we try to group the theonyms according to their linguistic nature. Besides that, the deity names are rendered through functional characteristics, as well as, geographical locations appropriately.

The linguistic classification is carried out by means of distinction of suffixal and other formants, in result of which, the names of Hurrian-Urartian [-ā, -(i)ne, -de, -ar-de, -re, -di-ne], Hittite

[ša, šini/e], Proto-Hittite [-ela, conf. Hittite -ili] and Semitic [-ta, -tu] origin are determined. Along with the derivatives, some radical names are occurred [Uā, Arde, Arne, Aue], as well as, compounds [Tej-šeba, At-bine etc.], including the *Zuzumaru* reduplication. Among the compounds, especially the Hittite and Proto-Hittite deity names with -šepa [Urat. -šeba], -pinu/-puna [Urat. -bine/-bune] components are distinguished. The latter, in particular, is realized in the reconstructed theonym *-i/Er(e)bune.

ՀԱԿԱՐԻԻ ՎԵՐՆԱՀՈՎՏԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Ալեքսան Ծակոբեան

Հակարի գետի վերին աւազանը, որը կազմուած է Շալուայ, Հոչանց եւ Աղաւնոյ վտակների հովիտներից, հնում համապատասխանում էր Սիւնիք նահանգի Աղաւնիք եւ Արցախ նահանգի Վայկունիք եւ Բերձոր գաւառների տարածքին:

Ղեւոնդ Ալիշանից, Սուրէն Երեմեանից ու նրանց հետեւորդներից պատմագրութեան մէջ արմատաւորուել է այն սխալ պատկերացումը, ըստ որի՝ նշուած ամբողջ շրջանը, արեւելքում մինչեւ Արցախեան լեռնաշղթան, մաս է կազմել Աղաւնիք (հետագայում՝ Քաշաթաղ) գաւառին: Սակայն Ստեփաննոս Օրբէլեանի «Սիւնեաց պատմութիւնը», Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Աղուանից պատմութիւնը», Տաթևի արքեպիսկոպոսանիստի Հարկատու գիւղերի ցանկերը, Ամարասի (հարաւային Արցախի) եպիսկոպոսութեան թեմական սահմանները նշող Գոչաւիանքի արձանագրութիւնը եւ Սիւնիքում ու Արցախում ստեղծուած այլ սկզբնաղբիւրներ, հստակօրէն արձանագրում են աշխարհացոյցեան եւ հետագայ Սիւնիքի ու Արցախի սահմանը Հակարի գետի ամբողջ երկարութեամբ, հիւսիսում Հոչանցով եւ նրա օժանդակ Գորանիխով: Հարցի խոր քննարկումը թողնելով այլ առիթի, այս ներածութեան մէջ նշենք միայն, որ սիւնիք-արցախեան սահմանը Հակարի-Հոչանցով փոփոխութիւն չի կրել մինչեւ նոր ժամանակները, մինչեւ ժԹ դարում ռուսական կայսրութեան Երկրաւետաօլի նահանգի Ջանգեղուրի գաւառի ստեղծումը, որն արեւելքում արդէն հասնում էր Արցախի լեռնաշղթային:

Այստեղ արձանագրենք նաեւ մեր տարածքի երեք գաւառների հարաւային սահմանագծերը: Աղաւնիքի սահմանը Հարանդ գաւառի հետ անցնում էր Աղաւնոյ (Միծեռնաւանուց) գետի եւ նրա խրով վտակի (Արաւուսի գետակ) ջրբաժան սարահարթի գծով: Վայկունիքի սահմանը Բերձորի հետ անցնում էր, ամենայն հաւանականութեամբ, Եղիւնի ձորակով (Թղիկ եւ Ջերթի գիւղերի միջեւ): Բերձորի հարաւային սահմանը (Սիւնեանի-Կոտակ գաւառի հետ) անցնում էր, ամենայն հաւանականութեամբ, Փոքր Ակերայի ձորակով (Ամուտեղ եւ Թովմասար լեռնագագաթների միջեւ):

Քոչուոր էթնիկական տարրերի ներթափանցումներից երկուս ու կէս դար անց Հակարիի վերնագաւառը վերստին լիովին հայաշուք է, եւ այդ վերածնունդի պտուղներից մէկն էլ նորագոյն ժամանակների գիտութեան անյայտ յուշարձանների անընդհատ յայտնաբերումն է հայ բնակչութեան կողմից: Ստորեւ ներկայացուող վիճակագրականների արդիւնքն են:

1. ԱՂԱՎՈՒՆԻՔ

Աղբաթիւրտի գիւղատեղին գտնուում է Աղաւնոյ վտակի (Միծեռնաւանուց գետ, Աղօղլան, Ջարուխայ) վերնահովտում, Իշխանասարի հիւսիսային լանջերի հորդաբուխ աղբիւրներից ձեւաւորուող եւ շուրջ 10կմ զուգահեռ հոսող երկու օժանդակների միջեւ հարաւից հիւսիս ձգուող սարահարթի վերջին մասում, Աղաւնոյի ափից 2 կմ հարաւ-արեւմուտք,